Andranik Margaryan
Memorial

Անդրանիկ Մարգարյանի 10-րդ հուշամրցաշար

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2020թ. հունվարի 9-17-ը Հայաստանի շախմատի ակադեմիան անցկացնում է Անդրանիկ Մարգարյանի 10-րդ հուշամրցաշարը: Մրցաշարն անցկացվում է շրջանային մրցակարգով՝ 10 մասնակիցներով, 9 խաղափուլով, միջազգային գրոսմայստերի նորմայով:
Ժամակարգը. 90 րոպե առաջին 40 քայլի համար, այնուհետև 30 րոպե՝ մինչև խաղի ավարտը՝ յուրաքանչյուր քայլին 30 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

Մրցանակային ֆոնդը կազմում է 3000 ամերիկյան դոլարին համարժեք ՀՀ դրամ:

1-ին մրցանակ - $ 1200
2-րդ մրցանակ - $ 1000
3-րդ մրցանակ - $ 800

Հավասար միավորներ հավաքելու դեպքում, դրամական մրցանակները բաշխվում են հավասարաչափ, իսկ տեղերը որոշվում են ըստ՝

1. Զոնեբորն-Բերգերի գործակցի,
2. սևերով խաղացած պարտիաների առավելագույն քանակի,
3. անձնական հանդիպումների արդյունքի /արդյունքների/,
4. հաղթանակների առավելագույն քանակի:

Շրջանային մրցաշարի մեկնարկից առաջ 10 շախմատիստները կմասնակցեն բլից մրցաշարի, որի վերջնական դասակարգման արդյունքերով կորոշվի հիմնական մրցաշարի վիճակահանությունը:
Բլից մրցաշարն անցկացվում է 9 խաղափուլով:
Ժամակարգը. 3 րոպե՝ յուրաքանչյուր քայլին 2 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

Ժամանակացույց.
Բլից մրցաշար - 9 հունվարի, 11:00
1-ին տուր - 9 հունվարի, 16:00
2-րդ տուր - 10 հունվարի, 15:00
3-րդ տուր - 11 հունվարի, 15:00
4-րդ տուր - 12 հունվարի, 15:00
5-րդ տուր - 13 հունվարի, 15:00
6-րդ տուր - 14 հունվարի, 15:00
7-րդ տուր - 15 հունվարի, 15:00
8-րդ տուր - 16 հունվարի, 15:00
9-րդ տուր - 17 հունվարի, 11:00
Փակման արարողություն - 17 հունվարի, 18:00

Մրցաշարի անցկացման վայրը՝ Հայաստանի շախմատի ակադեմիա (ՀՀ, ք.Երևան, Շևչենկո 34):

Մրցաշարի համակարգող՝ Ալլա Խաչատրյան
Էլ. հասցե՝ chessacademyarm@gmail.com
Հեռ. ՝ +374 10-448479, +374 99 448479